

ԿՐԾՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅՈՒԿԱՆ

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒԻ Ի ՄԵՌԵԼՈՅ

«Եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայնսն են հաւատքն ձեր»: Ա. Կորնթ. ԺԵ. 17.

Ո՛րքան խորհրդաւոր է հնչում եկեղեցու զանգակը ձմեռուայ սառնամանիքներին յաջորդող Ս. Յարարութեան տօնին: Մարդ զգում է, որ այդ օրը անցած օրերին նման չէ: Մարդ հոգով բարձրանում, թմրութիւնից արթնանում է և մի վերին ներշնչմամբ հոգու և մտքի անտեսանելի թռիչքով դէպի վեր, դէպի կապուտակ երկինքն է սլանում, հոգու ամբողջ զօրութեամբ իւր սրտի խորին զգացածը երգում ու փառաբանում է Բարձրեալին՝ ցնծութեան աւետիք տալով իրեն՝ «Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

Հոովմէական լայնածափալ պետութեան մէջ, ժամանակի կայսրների զեղխ և շուայտ կեանքի ազդեցութեան շնորհիւ, բոլոր ազգերի հետ Իորայէլի ժողովուրդն էլ ճշմարտութեան ուղին կորցրել էր: Հեթանոսները մտքով կոյր, և զեղխութեան մէջ կորած լինելով, անընդունակ էին լաւագոյն ապագայի համար յուսոյ նշոյլ ունենալու: Իսկ Իսրայէլի ժողովուրդը, թէև ներքին բարոյական ոյժից զրկուած, հորիզոնի վերայ ծագող փրկութեան նշաններ է տեսնում, և երբէք իսկ զէնքի ոյժով իւր իրաւունքները վիրականգնել ցանկանում: Բայց շրջապատը վարակիչ էր: Նա անգիտակցաբար հետևում էր իրեն շրջապատող մթնոլորդին և զեղխութեան բահաղի առաջ խունկ ծխում: Նա մոռացել էր իւր Արարչին:

Իսրայէլի այս վիճակն էր ողբում Եսայի մարրգարէն, որի բերանով Արարիչն ասում է. «Ծանեաւ եղն զստացիչ իւր և էշ զմսուր Տեառն իւրոյ, իսկ Իսրայէլ զիս ոչ ծա-

նեաւոյ Սակայն դառնութեան բաժակը լցուած էր, փրկութեան ժամը հասած:

Արարչութեան խորհուրդը կատարուեց: Ամէնի Աստուածը, Միածին Որդին, յաւիտենական Սէրը խոնարհուեց, երկիր իջաւ, Փրկիչը մարդացաւ: Իսրայէլի մէջ լոյս ծագեց: Թմրած, մահաշունչ քնի մէջ ընկղմուած մարդկութեան համար փրկութեան փարոս վառուեց: Ճշմարտութեան ճանապարհը կորցրած խաւարի մէջ խարխափող մարդու առաջ յուսոյ ապաւէն երևաց: Ալեկոծեալ ծովի վերայ իբրև տաշեղ տարուբերող մարդկութեան կեանքի նաւի խարխսխը իւր հաստատուն կայանը գտաւ:

Բայց դեռ թանձր էր դրսի խաւարը. նա լոյսի ամէն մի նշոյլը խեղտել է կամենում: Ծագող փրկութեան արեգակի արշալոյսի դէմ՝ նա պատերազմ է յայտարարում: Նա փախչում է լոյսից և մեռելութիւն բերող իւր թևերը աւելի լայն տարածում՝ քնի մէջ ընկղմուած մարդկութեան վերայ: Խաւարի առաջնորդները՝ փարիսեցիներն ու դպիրները զօրականների օգնութեամբ բռնում են Փրկչին և մահուան դատապարտում: Փայլուն ապագայի յուսով ապրող Իսրայէլը այս ձևով իւր նպատակին հասնելու խոչնդոտը մէջ տեղից վերացրած կարծեց:

«Ես իբրև զգառն անմեղ վարեալ ի սպանդ, ոչ դիտացի թէ զինէն խորհեցան խորհուրդ չար» (Երեմ. ԺԱ.) եւ ահա Փրկիչը խաչի վերայ՝ Յաւիտենական սէրը փայտին է գամուած: Կարծէք մարդկութեան ճրագը մարեց, յոյսը կտրուեց: Խաւարը յաղթանակը տարւած կարծելով, փրկութեան արևի դէմ իւր ճիւղաղային քրքիչն արձակեց: «Նա զմեզս մեր բառնայ և վասն մեր չարչարի, և մենք համարեցաք զնա ի ցաւս և ի հարուածս և ի չարչարանս իբրև յԱստուծոյ» (Ես. ԾԲ.)

Ո՞վ մեծասքանչ խորհուրդ—մարդկութեան փրկիչը խաչի վերայ: Նա որ ուրիշների լեզուն բացեց, այսօր ինքն լռել է. որ խոստանում էր ուրիշներին կենդանի ջուր տալ, այսօր ինքը ծարաւ է զգում: Ո՞վ անքննելի խորհուրդ աստուածային, աշխարհի լոյսը, փրկութեան արևը դերեզմանի

մէջ է դրուած. Այսօր արեգակը խաւարեց, լուսինը իւր լոյսից զրկուեց, երկիրը շարժուեց, և տաճարի վարագոյրը վերից վայր պատառուեց: Սակայն կարող էր ստեղծուածը իւր ստեղծողին իրեն մէջ ամփոփել: «Լերինք սրպէս մոմ հալեսցին յերեսած Տեառն, յերեսաց Տեառն ամենայն երկիր: Պատմեսցեն երկինք զարդարութիւն նրա և տեսցին ամենայն ժողովուրդը զփառս նորա», երգում է քաղցրատաւիդ Դաւիթ մարգարէն:

Եւ ինչպէս որ, երբ գարնանային մի թեթեւ հոգմ է փչում, բնութիւնը կապող սառնամանիքի ոյժը ջախջախում է, կոկոնները բացուում, վարդ, մանուշակ ծաղկում, մերկ ծառերը կանաչ են հագնում և դաշտ ու բնութիւն կենդանանում,— ահա այդպիսի մի թովիչ ձայնով ևս վերակենդանութիւն են տալիս մարդկութեանը իւզաբեր կանանց բերանով աւետաբեր հրեշտակները. «Զի խնդրէք զկենդանին ընդ մեռեալս, չէ աստ, այլ յարեալ» (Ղուկ. ԻԳ.)

Հոգեւոր Իսրայէլի ժողովրդի փրկութեան այս լոյսն է, որ Եօայի մարգարէն իւր հայրենիքի աւերակների վերայ հոգւոյ զօրութեամբ տեսնում է ծագած և ապագայի վերակենդանութեան յոյսով իւր ուրախութիւնը թագցնել չկարողանալով՝ գոչում. «Լուսաւորեանց, լուսաւորեանց, Երուսաղէմ, չի հասեալ է լոյս քո, և փառք Տեառն ի վերայ քո ծագեսցեն: Զի ահա խաւար ծածկեաց զերկիր և մառախուղ զհեթանոսս. բայց ի քեզ Տէր յայտնեսցի, և փառք նորա ի քեզ երեսցեն, և զնոսցին թագաւորը ի լոյս քո, և հեթանոսք ի ծագել լուսոյ քո» (Ես. Կ.)

Այո, յաւիտենական Սէրն անմահ էր, յաւիտենական Սէրը յարութիւն առաւ:

«Մեզ և ձեզ մեծ աւետիք, Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

Դարեր են անցել այն օրից, երբ առաջին անգամ հրեշտակների այս աւետաբեր ձայնը հնչեց, եւ ինչպէս ամէն անգամ, ծառ ու ծաղկունքի բացուիլը ձիւնի սպիտակ սաւանով ծածկուած բնութեանը գարնան մօտենալն է աւետում, այդպէս էլ ամէն գարնան հետ, յաւի-

տեանս յաւիտենից, ճշմարտութեան ուղին կորցրած, ահ ու դողով Փրկչի գերեզմանին մօտեցող մարդութեան ա-
կանջին պիտի հնչէ հրեշտակի աւետարեւր ձայնը. «Մի եր-
կնչիք, զՅիսուս խնդրէք, զնազավրեցի զխաչեցեալն, չէ
աստ, յարեալ» (Մարկ. ԺԶ)։

Այս տօնը ճշմարտութեան և հաւատի յաղթանակի
տօնն է։ Այս իրականութեան մօտս մանուկներ չանցնենք,
այլ ազատ ու համարձակ մեր վիրաւոր սրտերը բանանք
Փրկչի առաջ, խօսենք ու փառաւորենք նրա լուսափայլ
Յարութիւնը։ Մեր աչքերն ուղղենք դէպի յաւիտենական
Սէրը, որ երկնքի արքայութեան բանալին, յաւիտենական
կեանքի ճանապարհն է, որ նա մաքրէ, սրբէ մեր սիրտն
ու հոգին, որպէսզի հաստատուն հաւատով համարձակու-
թիւն ունենանք մտաւորապէս բարձրանալ դէպի վեր և
նրա գահոյքի առաջ սերովբեների հետ նրա հրաշալի
Յարութիւնը փառաւորել կարողանանք։ Դատարկ կլինէր
մեր յոյսը, ունայն մեր հաւատը եթէ Քրիստոս յարութիւն
առած չլինէր. «Եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն
են հաւատքն ձեր»։

Աւետաբեր այս ձայնն է, որ այսօր Հայաստանեայց Ս.
եկեղեցւոյ սգազգեաց սեղանից՝ իբրև մի բարձր դիտանք
ցից հնչում է ի լուր իւր ցրուեալ, թշուառ զաւակների։
Աւետաբեր այս ձայնն է, որ ի սփիւռս տարածուած հայ
Ժողովրդին հաւաքում է եկեղեցու հովանու տակ, հոգով
ու մտքով կապում և սրբազան հաւատը նրանց մէջ կրկին
անգամ վերականգնացնում։ Աւետաբեր այս միակ ձայնն
է, որ ամէն փառքից զրկուած հէգ հայ Ժողովրդին յոյս,
հաւատ և սէր է ներշնչում այսօր, հոգեւորապէս մխիթարում,
անկեալներին ոտի կանգնեցնում և բոլորին աւետում։

— Մեզ և ձեզ մեծ աւետիք, Քրիստոս յարեալ ի մե-
ռելոցս։

Արսակ վարդապետ

